*Կ-545-31.03.2023-ՏՏԳՇ-011*

*Երկրորդ ընթերցում*

*(Լրամշակված նախագիծ)*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված* 1.** «Բույսերի սորտերի պահպանության մասին» 2017 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 1-ին կետի ա) ենթակետի «կամ» բառը փոխարինել «և» բառով և բ) ենթակետի «բացահայտողի» բառից հետո «կամ» բառը փոխարինել «և» բառով,

2) 3-րդ կետի «անկախ բուծողին իրավունքներ տալու հանգամանքից» բառերը փոխարինել «անկախ բուծողի իրավունքի տրամադրման պայմանների լիովին բավարարումից» բառերով,

3) 4-րդ կետի «գյուղատնտեսության» բառը փոխարինել «էկոնոմիկայի» բառով,

4) 5-րդ կետում «պաշտպանության» բառերը փոխարինել «պահպանության» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

5) 6-րդ կետից հանել «1972 թվականի կամ» բառերը,

***Հոդված* 2.** Օրենքի բոլոր հոդվածներում «ՈՒՊՈՎ-ի» բառը փոխարինել «ՈՒՊՈՎ» բառով:

***Հոդված* 3.**

Օրենքի 3-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «անդամ պետության» բառերը փոխարինել «անդամների» բառով, իսկ «անդամ պետությունում» բառերը՝ «անդամում» բառով,

2) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից կիրառվում է բոլոր բույսերի ցեղերի և տեսակների նկատմամբ:»:

***Հոդված* 4.** Օրենքի 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «սերմնանյութը (տնկանյութը)» բառերը փոխարինել «բազմացվող նյութը» բառերով,

2) 1-ին մասի 1-ին կետի «հայտի ներկայացման օրվանից ոչ պակաս, քան մեկ տարի առաջ» բառերը փոխարինել «մինչև հայտի ներկայացման օրվանից մեկ տարի առաջ» բառերով,

3) 1-ին մասի 2-րդ կետում «հայտի ներկայացման օրվանից ոչ պակաս, քան չորս տարի առաջ, պտղատու ծառատեսակների և խաղողի համար՝ ոչ պակաս, քան վեց տարի առաջ» բառերը փոխարինել «հայտի ներկայացման օրվանից չորս տարի առաջ, իսկ պտղատու ծառատեսակների և խաղողի համար՝ վեց տարի առաջ» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «յուրաքանչյուր» բառը փոխարինել «ցանկացած» բառով:

**Հոդված 6.** Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սորտը համարվում է միատարր, եթե այն բավականաչափ միատարր է իրեն համապատասխան հատկանիշներով՝ հաշվի առնելով փոփոխությունը, որը կարող է ի հայտ գալ դրանց բազմացման առանձնահատկությունների արդյունքում:»:

**Հոդված 7.** Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «մի քանի» բառը փոխարինել «կրկնվող» բառով և հանել «(վերարտադրումից)» բառը:

**Հոդված 8.** Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում «լրացվում» բառը փոխել «ներկայացվում» բառով:

**Հոդված 9.** Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր ոք, որն ՈՒՊՈՎ անդամներից մեկում ներկայացրել է բույսի նոր սորտի պահպանության հայտ, 12 ամիս ժամկետով օգտվում է առաջնության իրավունքից՝ մեկ այլ ՈՒՊՈՎ անդամի լիազոր մարմին նույն սորտի նկատմամբ բուծողի իրավունքի տրամադրման հայտի ներկայացման նպատակով: Նշված ժամկետը հաշվարկվում է առաջին հայտը ներկայացնելու օրվանից:

2. Հայտը ներկայացնելու օրը չի հաշվարկվում սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում:»:

2) 2-րդ մասում «օրվանից» բառից հետո լրացնել «ոչ ուշ քան» բառերը.

3) լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Առաջնության ժամկետի ավարտից կամ առաջին հայտը մերժվելուց կամ հետ կանչվելուց հետո բուծողին տրվում է երկու տարի ժամկետ՝ 11-րդ հոդվածի համաձայն փորձարկումների իրականացման համար պահանջվող տեղեկատվությունը, փաստաթուղթը կամ նյութերը լիազոր մարմին տրամադրելու համար:»:

**Հոդված 10**. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասում «սորտին պահպանություն չտրամադրելու,» բառերից հետո լրացնել «այլ պետությունում կամ միջկառավարական կազմակերպությունում դրա պահպանությունը մերժելու կամ դրա ժամկետի լրանալու հիմքով» բառերով:

**Հոդված 11.** Օրենքի 12-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «հայտ ներկայացնելու պահից մինչև բուծողի իրավունքի տրամադրումը» բառերը փոխարինել «հայտի ներկայացման և բուծողի իրավունքի տրամադրման միջև ընկած ժամանակահատվածում» բառերով.

2) 2-րդ մասի «ենթադրում» բառը փոխարինել «ընդգրկում» բառով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով՝

«3. Հայտատուն ցանկացած անձի նկատմամբ համարվում է բուծողի իրավունքի կրող, ով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակահատվածում կատարել է գործողություններ, որոնք իրավունքը շնորհվելուց հետո պահանջում են բուծողի թույլտվությունը, ինչպես նախատեսված է 13-րդ հոդվածում: Հայտատուն պետք է ունենա լիցենզիայի պայմանագրեր կնքելու և դատական վարույթ հարուցելու նույն իրավունքները, որոնք տրվում են բուծողին համապատասխան սորտի համար հայտի ներկայացման ամսաթվին: Սույն մասով վերապահված իրավունքները համարվում են երբեք չտրամադրված, եթե իրավունքը չի տրվում:

4. Ժամանակավոր պահպանությունն ուժի մեջ է մտնում միայն այն անձանց նկատմամբ, ում բուծողը ծանուցել է հայտի ներկայացման մասին:»:

**Հոդված 12.** Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**1**. Համաձայն սույն օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների, պահպանվող սորտի բազմացվող նյութի հետ կապված՝ սույն հոդվածում նշված գործողությունների համար պահանջվում է բուծողի թույլտվությունը:»:

2) 1-ին մասի 1-ին կետում «(բազմացում)» բառը փոխարինել «(կրկնապատկում)» բառով.

3) 1-ին մասի 2-րդ կետում «վերարտադրության (բազմացման)» բառերը փոխարինել «բազմացման» բառով.

4) 1-ին մասի 7-րդ կետի «1-ին և 2-րդ» բառերը փոխարինել «1-6-րդ» բառերով.

5) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Բուծողը կարող է թույլտվության համար առաջադրել որոշակի պահանջներ և սահմանափակումներ:».

6) 3-րդ մասի «Սույն» բառից առաջ լրացնել «Օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն,» բառերը, «սորտի» բառից հետո «բուսանյութի» բառը փոխարինել «բազմացվող նյութի» բառերով և «բուծողը» բառից հետո լրացնել «ողջամիտ» բառով.

7) 4-րդ մասի «4» թիվը փոխարինել «3» թվով.

8) 4-րդ մասի 2-րդ կետում «7» թիվը փոխարինել «6» թվով.

9) 5-րդ մասի 1-ին կետում «ստացվել է» բառերից առաջ լրացնել «հիմնականում» բառերը.

10) 6-րդ մասում «Սորտերը» բառից առաջ լրացնել «հիմնականում ստացված» բառերը:

**Հոդված 13.** Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) վերնագրի «շրջանակները» բառը փոխարինել «բացառությունները» բառով.

2) 1-ին մասի 3-րդ կետում «13-րդ հոդվածի 5-րդ» բառերը փոխարինել «13-րդ հոդվածի 4-րդ» բառերով և «նոր» բառը փոխարինել «այլ» բառով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով՝

«2. Բուծողի իրավունքների խախտում չի համարվում ողջամիտ սահմաններում և բուծողների օրինական շահերի պահպանության դեպքում ֆերմերների կողմից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկում ներառված պահպանվող սորտերի կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետերով նախատեսված սորտերի՝ անձնական տնտեսություններում մշակության արդյունքում ստացված բերքի օգտագործումը բազմացման նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունները չեն վերաբերում պտղատու, բանջարային մշակաբույսերին, դեկորատիվ և անտառային բույսերին, որոնց ցանկը սահմանում է լիազոր մարմինը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նշված ողջամիտ սահմանները և բուծողի օրինական շահերի պահպանության միջոցները սահմանում է լիազոր մարմինը:»:

**Հոդված 14.** Օրենքի 15-րդ հոդվածում՝

**1)** 1-ին մասում «5» թիվը փոխարինել «4» թվով.

2) 1-ին մասի 1-ին կետում «հետ» բառից հետո լրացնել «,կամ» բառը.

3) 1-ին մասի 2-րդ կետում «նյութի» բառից առաջ լրացնել «սորտի» բառը և «տեսակի կամ տիպի սորտերը» բառերը փոխարինել «ցեղին կամ տեսակին պատկանող սորտերը» բառերով:

**Հոդված 15.** Օրենքի 16-րդ հոդվածում՝

1) վերնագրում «իրավունքի» բառից հետո լրացնել «իրացման» բառը.

2) 1-ին մասից հանել «օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական համարժեք փոխհատուցմամբ» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով՝

«2. Երբ որևէ նման սահմանափակում ազդում է երրորդ կողմին ցանկացած գործողություն իրականացնելու լիազորություն վերապահելու վրա, որի համար պահանջվում է բուծողի թույլտվությունը, ապա բուծողը ստանում է համարժեք փոխհատուցում:»:

**Հոդված 16.** Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «սերմնանյութի, տնկանյութի կամ բազմացման համար նախատեսված այլ նյութերի արտադրությունը, հավաստագրումը և շուկայահանությունը կամ այդ նյութերի ներկրումն ու արտահանումը կարգավորող որևէ միջոցով» բառը փոխարինել «սորտերի նյութերի

արտադրությունը, հավաստագրումը և շուկայահանումը կամ այդ նյութերի ներկրումն ու արտահանումը կարգավորելու համար ձեռնարկված ցանկացած միջոցով» բառերով:

**Հոդված 17.** Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «ժամկետը» բառից հետո լրացնել «՝ բուծողին իրավունք տալու օրվանից» բառերը և հանել 2-րդ մասը:

**Հոդված 18.** Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «Ցանկացած» բառը փոխարինել «Յուրաքանչյուր» բառով, «ապահովի» բառից հետո լրացնել «դրա հիմնական նշանակությունը և» բառերը, «այդ» բառից հետո լրացնել «որպես սորտի անվանում գրանցված» բառերը.

2) 2-րդ մասում «ցանկացած այլ» բառերը փոխարինել «յուրաքանչյուր» բառով և «ՈՒՊՈՎ-ի որևէ անդամ պետության» բառերը փոխարինել «որևէ ՈՒՊՈՎ անդամի» բառերով.

3) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Երրորդ անձանց նախկին իրավունքները ենթակա չեն վերանայման: Եթե նախկինում ձեռք բերված իրավունքի պատճառով սորտի անվանման գործածումը արգելվում է համաձայն սույն հոդվածի 8-րդ մասի, ապա լիազոր մարմինը բուծողից պահանջում է սորտի համար ներկայացնել այլ անվանում:».

4) 5-րդ մասում «անդամ պետություններում» բառերը փոխարինել «անդամներում» բառերով.

5) 6-րդ մասից հանել «ՈՒՊՈՎ-ի կանոնադրությամբ հաստատված կարգով» բառերը.

6) 8-րդ մասում «Յուրաքանչյուր ոք» բառերը փոխարինել «Ցանկացած անձ» բառերով և հանել «կամ ՈՒՊՈՎ-ի անդամ պետության» բառերը և «չեն խոչընդոտում սորտի անվանման օգտագործմանը» բառերը փոխարինել «կանխում են այդպիսի օգտագործումը» բառերով:

**Հոդված 19.** Օրենքի 20-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 2-րդ կետում «վրա» բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ. «և բուծողի իրավունքների տրամադրման պահին չեն պահպանվել սույն օրենքի 7-րդ կամ 8-րդ հոդվածների դրույթներով սահմանված պահանջները.».

2) 1-ին մասի 3-րդ կետում «անձին» բառից հետո շարադրել հետևյալ խմբագրությամբ. «եթե միայն այն չի փոխանցվել այն անձին, ով ունի այդ իրավունքը.»:

**Հոդված 20.** Օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի 1-ին կետի «պահանջները» բառը փոխարինել «պայմանները» բառով.

2) 1-ին մասի 2-րդ կետի բ. ենթակետում «առաջարկել» բառը փոխարինել «առաջարկում» բառով և «և» բառը փոխարինել «եթե» բառով.

3) 1-ին մասի 2-րդ կետը լրացնել գ. ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «գ. բուծողը չի վճարել այն վճարները, որոնք նախատեսված են վճարման ենթակա իրավունքներն ուժի մեջ մնալու համար:»:

**Հոդված 21. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող այլ նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 1.** «Բույսերի սորտերի պահպանության մասին» 2017 թվականի դեկտեմբերի 8-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում՝

6) 1-ին կետի ա) ~~և բ)~~ ենթակետ~~եր~~ի «կամ» բառ~~եր~~ը փոխարինել «և» բառ~~եր~~ով և բ) ենթակետի «բացահայտողի» բառից հետո «կամ» բառը փոխարինել «և» բառով,

7) 3-րդ կետի «անկախ բուծողին իրավունքներ տալու հանգամանքից» բառերը փոխարինել «անկախ բուծողի իրավունքի տրամադրման պայմանների լիովին բավարարումից» բառերով,

8) 4-րդ կետի «գյուղատնտեսության» բառը փոխարինել «էկոնոմիկայի» բառով,

9) 5-րդ կետում «պաշտպանությ~~ու~~ան» բառերը փոխարինել «պահպանությ~~ու~~ան» բառերով՝ համապատասխան հոլովաձևերով,

10)6-րդ կետից հանել «1972 թվականի կամ» բառերը,

11) ~~9-րդ կետում~~ Հոդված 2. Օրենքի բոլոր հոդվածներում «ՈՒՊՈՎ-ի» բառը փոխարինել «ՈՒՊՈՎ» բառով:

**Հոդված ~~2~~3.** Օրենքի 3-րդ հոդվածում՝

3) 1-ին մասում «անդամ պետության» բառերը փոխարինել «անդամների» բառով, իսկ «անդամ պետությունում» բառերը՝ «անդամում» բառով,

4) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից կիրառվում է բոլոր բույսերի ցեղերի և տեսակների նկատմամբ:»:

**Հոդված ~~3~~4**. Օրենքի 5-րդ հոդվածում՝

4) 1-ին մասի «սերմնանյութը (տնկանյութը)» բառերը փոխարինել «բազմացվող նյութը» բառերով,

5) 1-ին մասի 1-ին կետի «հայտի ներկայացման օրվանից ոչ պակաս, քան մեկ տարի առաջ» բառերը փոխարինել «մինչև հայտի ներկայացման օրվանից մեկ տարի առաջ» բառերով,

6) 1-ին մասի 2-րդ կետում «հայտի ներկայացման օրվանից ոչ պակաս, քան չորս տարի առաջ, պտղատու ծառատեսակների և խաղողի համար՝ ոչ պակաս, քան վեց տարի առաջ» բառերը փոխարինել «~~վերոնշյալ ժամկետից~~հայտի ներկայացման օրվանից չորս տարի առաջ, իսկ պտղատու ծառատեսակների և խաղողի համար՝ վեց տարի առաջ» բառերով:

**Հոդված ~~4~~5**. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում «յուրաքանչյուր» բառը փոխարինել «ցանկացած» բառով:

**Հոդված ~~5~~6**. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Սորտը համարվում է միատարր, եթե այն բավականաչափ միատարր է իրեն համապատասխան հատկանիշներով՝ հաշվի առնելով փոփոխությունը, որը կարող է ի հայտ գալ դրանց բազմացման առանձնահատկությունների արդյունքում:»:

**Հոդված ~~6~~7**. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասում «մի քանի» բառը փոխարինել «կրկնվող» բառով և հանել «(վերարտադրումից)» բառը:

**Հոդված ~~7~~8**. Օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասում «լրացվում» բառը փոխել «ներկայացվում» բառով:

**Հոդված ~~8~~9**. Օրենքի 10-րդ հոդվածում՝

4) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Յուրաքանչյուր ոք, որն ՈՒՊՈՎ~~-ի~~ անդամներից մեկում ներկայացրել է բույսի նոր սորտի պահպանության հայտ, 12 ամիս ժամկետով օգտվում է առաջնության իրավունքից՝ մեկ այլ ՈՒՊՈՎ~~-ի~~ անդամի լիազոր մարմին նույն սորտի նկատմամբ բուծողի իրավունքի տրամադրման հայտի ներկայացման նպատակով: Նշված ժամկետը հաշվարկվում է առաջին հայտը ներկայացնելու օրվանից:

2. Հայտը ներկայացնելու օրը չի հաշվարկվում սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետում:»:

5) 2-րդ մասում «օրվանից» բառից հետո լրացնել «ոչ ուշ քան» բառերը.

6) ~~4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ~~ լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«4. Առաջնության ժամկետի ավարտից կամ առաջին հայտը մերժվելուց կամ հետ կանչվելուց հետո բուծողին տրվում է երկու տարի ժամկետ՝ 11-րդ հոդվածի համաձայն փորձարկումների իրականացման համար պահանջվող տեղեկատվությունը, փաստաթուղթը կամ նյութերը լիազոր մարմին տրամադրելու համար:»:

**Հոդված ~~9~~10**. Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասում «սորտին պահպանություն չտրամադրելու,» բառերից հետո լրացնել «այլ պետությունում կամ միջկառավարական կազմակերպությունում դրա պահպանությունը մերժելու կամ դրա ժամկետի լրանալու հիմքով» բառերով:

**Հոդված ~~10~~11**. Օրենքի 12-րդ հոդվածում՝

4) 1-ին մասի «հայտ ներկայացնելու պահից մինչև բուծողի իրավունքի տրամադրումը» բառերը փոխարինել «հայտի ներկայացման և բուծողի իրավունքի տրամադրման միջև ընկած ժամանակահատվածում» բառերով.

5) 2-րդ մասի «ենթադրում» բառը փոխարինել «ընդգրկում» բառով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասերով՝

«3. Հայտատուն ցանկացած անձի նկատմամբ համարվում է բուծողի իրավունքի կրող, ով սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամանակահատվածում կատարել է գործողություններ, որոնք իրավունքը շնորհվելուց հետո պահանջում են բուծողի թույլտվությունը, ինչպես նախատեսված է 13-րդ հոդվածում: Հայտատուն պետք է ունենա լիցենզիայի պայմանագրեր կնքելու և դատական վարույթ հարուցելու նույն իրավունքները, որոնք տրվում են բուծողին համապատասխան սորտի համար հայտի ներկայացման ամսաթվին: Սույն մասով վերապահված իրավունքները համարվում են երբեք չտրամադրված, եթե իրավունքը չի տրվում:

4. Ժամանակավոր պահպանությունն ուժի մեջ է մտնում միայն այն անձանց նկատմամբ, ում բուծողը ծանուցել է հայտի ներկայացման մասին:»:

**Հոդված ~~11~~12**. Օրենքի 13-րդ հոդվածում՝

11) 1-ին մաս~~ը~~ի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**1**. Համաձայն սույն օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների, պահպանվող սորտի բազմացվող նյութի հետ կապված՝ սույն հոդվածում նշված գործողությունների համար պահանջվում է բուծողի թույլտվությունը:»:

12)1-ին մասի 1-ին կետում «(բազմացում)» բառը փոխարինել «(կրկնապատկում)» բառով.

13)1-ին մասի 2-րդ կետում «վերարտադրության (բազմացման)» բառերը փոխարինել «բազմացման» բառով.

14)1-ին մասի 7-րդ կետի «1-ին և 2-րդ» բառերը փոխարինել «1-~~ից~~ 6-րդ» բառերով.

15)2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2. Բուծողը կարող է թույլտվության համար առաջադրել որոշակի պահանջներ և սահմանափակումներ:».

16)3-րդ մասի «~~ս~~Սույն» բառից առաջ լրացնել «Օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն,» բառերը, «սորտի» բառից հետո «բուսանյութի» բառը փոխարինել «բազմացվող նյութի» բառերով և «բուծողը» բառից հետո լրացնել «ողջամիտ» բառով.

17) 4-րդ մասի «4» թիվը փոխարինել «3» թվով.

18) 4-րդ մասի 2-րդ կետում «7» թիվը փոխարինել «6» թվով.

19) 5-րդ մասի 1-ին կետում «ստացվել է» բառերից առաջ լրացնել «հիմնականում» բառերը.

20) 6-րդ մասում «Սորտերը» բառից առաջ լրացնել «Հ~~հ~~իմնականում ստացված» բառերը:

**Հոդված ~~12~~13.** Օրենքի 14-րդ հոդվածում՝

4) վերնագրի «շրջանակները» բառը փոխարինել «բացառությունները» բառով.

5) 1-ին մասի 3-րդ կետում «13-րդ հոդվածի 5-րդ» բառերը փոխարինել «13-րդ հոդվածի 4-րդ» բառերով և «նոր» բառը փոխարինել «այլ» բառով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով՝

«2. Բուծողի իրավունքների խախտում չի համարվում ողջամիտ սահմաններում և բուծողների օրինական շահերի պահպանության դեպքում ֆերմերների կողմից գյուղատնտեսական մշակաբույսերի ցանկում ներառված պահպանվող սորտերի կամ սույն օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կամ 2-րդ կետերով նախատեսված սորտերի՝ անձնական տնտեսություններում մշակության արդյունքում ստացված բերքի օգտագործումը բազմացման նպատակով:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառությունները չեն վերաբերում պտղատու, բանջարային մշակաբույսերին, դեկորատիվ և անտառային բույսերին, որոնց ցանկը սահմանում է լիազոր մարմինը:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված նշված ողջամիտ սահմանները և բուծողի օրինական շահերի պահպանության միջոցները սահմանում է լիազոր մարմինը:»:

**Հոդված ~~13~~14.** Օրենքի 15-րդ հոդվածում՝

**4)** 1-ին մասում «5» թիվը փոխարինել «4» թվով.

5) 1-ին մասի 1-ին կետում «հետ» բառից հետո ~~ավելացնել~~ լրացնել«,կամ» բառը.

6) 1-ին մասի 2-րդ կետում «նյութի» բառից առաջ ~~ավելացնել~~ լրացնել «սորտի» բառը և «տեսակի կամ տիպի սորտերը» բառերը փոխարինել «ցեղին կամ տեսակին պատկանող սորտերը» բառերով:

**Հոդված ~~14~~15.** Օրենքի 16-րդ հոդվածում՝

4) վերնագրում «իրավունքի» բառից հետո ~~ավելացնել~~ լրացնել «իրացման» բառը.

5) 1-ին մասից հանել «օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական համարժեք փոխհատուցմամբ» բառերը.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մաս~~ով~~՝

«2. Երբ որևէ նման սահմանափակում ազդում է երրորդ կողմին ցանկացած գործողություն իրականացնելու լիազորություն վերապահելու վրա, որի համար պահանջվում է բուծողի թույլտվությունը, ապա բուծողը ստանում է համարժեք փոխհատուցում:»:

**Հոդված ~~15~~16**. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «սերմնանյութի, տնկանյութի կամ բազմացման համար նախատեսված այլ նյութերի արտադրությունը, հավաստագրումը և շուկայահանությունը կամ այդ նյութերի ներկրումն ու արտահանումը կարգավորող որևէ միջոցով» բառը փոխարինել «սորտերի նյութերի արտադրությունը, հավաստագրումը և շուկայահանումը կամ այդ նյութերի ներկրումն ու արտահանումը կարգավորելու համար ձեռնարկված ցանկացած միջոցով» բառերով:

**Հոդված ~~16~~17**. Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում «ժամկետը» բառից հետո ~~ավելացնել~~ լրացնել «՝ բուծողին իրավունք տալու օրվանից» բառերը և հանել 2-րդ մասը:

**Հոդված ~~17~~18**. Օրենքի 19-րդ հոդվածում՝

7) 1-ին մասում «~~ց~~Յանկացած» բառը փոխարինել «~~յ~~Յուրաքանչյուր» բառով, «ապահովի» բառից հետո լրացնել «դրա հիմնական նշանակությունը և» բառերը, «այդ» բառից հետո ~~ավելացնել~~ լրացնել «որպես սորտի անվանում գրանցված» բառերը.

8) 2-րդ մասում «ցանկացած այլ» բառերը փոխարինել «յուրաքանչյուր» բառով, և ~~հանել «պետության» բառը~~«ՈՒՊՈՎ-ի որևէ անդամ պետության» բառերը փոխարինել «որևէ ՈՒՊՈՎ անդամի» բառերով.

9) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Երրորդ անձանց նախկին իրավունքները ենթակա չեն վերանայման: Եթե նախկինում ձեռք բերված իրավունքի պատճառով սորտի անվանման գործածումը արգելվում է համաձայն սույն հոդվածի 8-րդ մասի, ապա լիազոր մարմինը բուծողից պահանջում է սորտի համար ներկայացնել այլ անվանում:».

10)5-րդ մասում «անդամ պետություններում» բառերը փոխարինել «անդամներում» բառերով.

11) 6-րդ մասից հանել «ՈՒՊՈՎ~~-ի~~ կանոնադրությամբ հաստատված կարգով» բառերը.

12) 8-րդ մասում «~~յ~~Յուրաքանչյուր որ» բառերը փոխարինել «~~ց~~Յանկացած անձ» բառերով և հանել «կամ ՈՒՊՈՎ~~-ի~~ անդամ պետության» բառերը և «չեն խոչընդոտում սորտի անվանման օգտագործմանը» բառերը փոխարինել «կանխում են այդպիսի օգտագործումը» բառերով:

**Հոդված ~~18~~19**. Օրենքի 20-րդ հոդվածում՝

3) 1-ին մասի 2-րդ կետում «վրա» բառից հետո ~~շարադրել~~ լրացնել հետևյալ ~~խմբագրությամբ~~ բովանդակությամբ և «բուծողի իրավունքների տրամադրման պահին չեն պահպանվել սույն օրենքի 7-րդ կամ 8-րդ հոդվածների դրույթներով սահմանված պահանջները.».

4) 1-ին մասի 3-րդ կետում «անձին» բառից հետո ~~խմբագրել~~ շարադրել հետևյալ խմբագրությամբ. «եթե միայն այն չի փոխանցվել այն անձին, ով ունի այդ իրավունքը.»:

**Հոդված ~~19~~20**. Օրենքի 21-րդ հոդվածում՝

4) 1-ին մասի 1-ին կետի «պահանջները» բառը փոխարինել «պայմանները» բառով.

5) 1-ին մասի 2-րդ կետի բ. ենթակետում «առաջարկել» բառը փոխարինել «առաջարկում» բառով և «և» բառը փոխարինել «եթե» բառով.

6) 1-ին մասի 2-րդ կետը լրացնել գ. ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. «գ. բուծողը չի վճարել այն վճարները, որոնք նախատեսված են վճարման ենթակա իրավունքներն ուժի մեջ մնալու համար:»:

**Հոդված ~~20~~21. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքից բխող այլ նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԲՈՒՅՍԵՐԻ ՍՈՐՏԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-545-31.03.2023-ՏՏԳՇ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկությունների ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | Կառավարություն | 1. 1-ին հոդվածի 1-ին մաս | 1. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետում կիրառված են երեք «կամ» բառեր, ուստի հիմք ընդունելով վերոգրյալը՝ Նախագծի 1-ին հոդվածի 1-ին կետում առաջարկում ենք հստակեցնել հղումը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված իրավադրույթը, այն է՝ «Հղումները կատարվում են հստակ եւ ուղղակի:»:<br>Հաշվի առնելով վերոգրյալը | **Ընդունվել է:** | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | առաջարկում ենք 1-ին հոդվածի 1-ին կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ՝<br>«1) 1-ին կետի ա) ենթակետի «կամ» բառը փոխարինել «և» բառով և բ) ենթակետի «բացահայտողի» բառից հետո «կամ» բառը փոխարինել «և» բառով,» | | |
| | | **2. 1-ին հոդված 4-րդ մաս** | 2. Նախագծի 1-ին հոդվածի 4-րդ մասում «պաշտպանություն» բառը փոխարինվել է «պաշտպանության» բառով, իսկ «պահպանություն» բառը՝ «պահպանության» բառով: | | |
| | | **3. 1-ին հոդված 6-րդ մաս** | **3. Առաջարկում ենք ամբողջ օրենքում «ՈՒՊՈՎ-ի» բառը փոխարինել «ՈՒՊՈՎ» բառով:**<br>**Հիմք ընդունելով վերոգրյալը առաջարկում ենք 5-րդ կետից հետո՝ «6) 9-րդ կետում» բառերը հանել, փոխարենը լրացնել նոր 2-րդ հոդված՝** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **Հետևյալ բովանդակությամբ՝**<br>**«Հոդված 2. Օրենքի բոլոր**<br>**հոդվածներում «ՈՒՊՈՎ-ի» բառը**<br>**փոխարինել «ՈՒՊՈՎ» բառով:»**<br>**Ըստ այդմ հոդվածների**<br>**համարակալումը փոխվել է:** | | |
| **2.** | **Կառավարություն** | **3-րդ (լրամշակված 4-րդ) հոդվածի 3-րդ մաս** | 3-րդ **(լրամշակված 4-րդ )** հոդվածի 3-րդ մասով Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում նախատեսված փոփոխության տեքստում հղումները կատարել հստակ և ուղղակի՝ զերծ մնալով «վերոնշյալ» բառի կիրառումից,<br><br>Առաջարկում ենք «վերոնշյալ ժամկետից» բառերը փոխարինել «հայտի ներկայացման օրվանից» բառերով: | Ընդունվել է: | **Ընդունվել է:** |
| **3.** | **Կառավարություն** | **8-րդ (լրամշակված 9-րդ) հոդվածի**<br>**1-ին և 3-րդ մասեր** | 1-ին մասի 2-րդ պարբերությունը համարակալել, իսկ 3-րդ մասի շարադրանքը շտկել հետևյալ բովանդակությամբ՝<br><br>«լրացնել նոր 4-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ»: | Ընդունվել է: | **Ընդունվել է:** |
| **4.** | **Կառավարություն** | **11-րդ (լրամշակված 12-րդ) հոդված 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 10-րդ մասեր** | Նախագծի 11-րդ (լրամշակված 12-րդ) հոդվածի՝<br><br>1. 1-ին մասում «շարադրել» բառից առաջ լրացնել «1-ին մասի 1-ին | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | պարբերությունը» բառերը,<br><br>2. 3-րդ մասով նախատեսված Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում «բառը» բառի փոխարեն լրացնել<br><br>«(բազմացման)» բառերը» բառերը,<br><br>3. 4-րդ մասի «1-ից 6-րդ» բառերը փոխարինել «1-6-րդ» բառերով,<br><br>4. 6-րդ մասում «սույն» բառը գրել մեծատառով, ինչպես նաև «բուսանյութ» և «բազմացվող նյութ» բառերը գրել համապատասխան հոլովաձևերով,<br><br>5. 10-րդ մասում «հիմնականում» բառը գրել մեծատառով: | | |
| **5.** | **Կառավարություն** | **13-րդ (լրամշակված 14-րդ) հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր** | «ավելացնել» բառի փոխարեն լրացնել «լրացնել» բառը: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| **6.** | **Կառավարություն** | **14-րդ (լրամշակված 15-րդ) հոդվածի 1-ին մաս** | «ավելացնել» բառի փոխարեն լրացնել «լրացնել» բառը: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| **7.** | **Կառավարություն** | **16-րդ (լրամշակված 17-րդ ) հոդված** | «ավելացնել» բառի փոխարեն լրացնել «լրացնել» բառը | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8. | **Կառավարություն** | **17-րդ (լրամշակված 18-րդ) հոդված 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ մասեր** | **1.** 1-ին մասում՝<br><br>«ցանկացած» և «յուրաքանչյուր» բառերը գրել մեծատառերով, «ավելացնել» բառի փոխարեն լրացնել «լրացնել» բառը<br><br>**2.** 2-րդ մասում «հանել պետության բառը» բառերը փոխարինել «ՈՒՊՈՎ-ի որևէ անդամ պետության» բառերը փոխարինել «որևէ ՈՒՊՈՎ անդամի» բառերով.» բառերով,<br><br>**3.** 5-րդ և 6-րդ մասերում՝ «ՈՒՊՈՎ-ի» ձևակերպման փոխարեն գրել «ՈՒՊՈՎ» ձևակերպումը,<br><br>**4.** 6-րդ մասում «յուրաքանչյուր բառը» բառերը փոխարինել «Յուրաքանչյուր ոք բառերը» բառերով, իսկ «ցանկացած բառով» բառերը փոխարինել «Ցանկացած անձ բառերով» բառերով: | Ընդունվել է: | Ընդունվել է: |
| **9.** | **Կառավարություն** | **18-րդ (լրամշակված 19-րդ) հոդված** | Առաջարկում ենք հոդվածը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին՝<br><br>Հաշվի առնելով վերոգրյալը՝<br><br>1. 1-ին մասում՝ «շարադրել հետևյալ խմբագրությամբ » բառերը փոխարինել «լրացնել հետևյալ բովանդակությամբ» | Ընդունվել է: | Ընդունվել է: |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | բառերով,<br><br>2. 2-րդ մասում՝ «խմբագրել» բառը փոխարինել «շարադրել» բառով: | | |